«տր. (մի քիչ փչացած) Ած գթայ ի հոգի Ոսկանոսին ծառայի քո ամէն (վերջին բառը կիսով չափ եղծուած)»։ Սիւների վրան հաստատուած է քառանկիւնի խորանը, կողքերի շրջանակները արմաւենիկի զարդերով, իսկ վերեւում կապոյտի վերայ սպիտակագեղով գրուած է. «տր. Ած ողորմեա Առաքել... (ի ամէն ?)»։ Խորանի ներքեւի մասն են կազմում կիսաշրջաններից կազմուած զոյգ լիւնետներ, որոնց գլխին մի երրորդը եռեքքառորդական բոլորակով։ Վերեւի անկիւններում ներսից՝ մի մի հիւսկէն վարդեակ, իսկ սրանց և լիւնետների մէջ մի մի եռատերեւ, հպման տեղում կարմիր գնդակ, և առնուած ցօղունների բոլորակի մէջ. եռեքքառորդական լիւնետի կեդրոնում դարձեալ մի վարդեակ արմաւենիկի և ցօղունների հիւսկէն զարդերով։ Լիւնետների կամարների տակ գրուած է. «Կանոն Բ։ յորս երեքն», միւսում եւս՝ «Կանոն Բ. յորս երեքն»։ Արտաքին լուսանցքում երկրուն, կանաչ նռնենու երկու կողմից մի մի արագիլ փաթթել են պարանոցները ծառին. ոտներն ու կտուցները կարմիր, փետուրները կապոյտ սպիտակով գծաւորուած։ Սիւների գլխի տախտակի վերայ, արտաքին լուսանցքում կանգնած է ոճաւորած մի սիրամարգ, պոչը խիստ վեր ցցած և ծայրից նռնանման զարդ կախուած. ոտքերը, կտուցը և գլխի զարդը կարմիր, իսկ փետուրները կապոյտ, սպիտակ և մոյգ մանուշակագոյն գծերով։ Ճակատի արտաքին զարդը բուսական է, որին դարձած են մի մի աղաւնի, իսկ անկիւններում եռատերեը յիշեցնող բուսական զարդով։

11ր. Ձեւակերպութեամբ նման 10ր-ին, սիւների զարդարի փոքրիկ փոփոխութեամբ։ Սիւների գլխի գերանի վերայ գրուած է. «Ած լմ Ցս. ողորմեա մեղուցեալ ոգւոյս ամէն». ճակատի տախտակի վերայ. «Տր. Ցս. ողորմեա Սա... (հակա, փչացած)»։ Արտաքին լուսանցքի նռնենին ոճաւորած տրագիլներով և սիրամարգով նման նախընթացին։ Ճակատին իրար դիմացի երկու թռչունները գլուխները յետ են դարձրել, պարանոցներին էլ կարմիր մանեակ ունին։

12ր — 13ա. Գեղարուեստական նոր մոտիւներ չեն տալիս, այլ տարբեր ձեւակերպութիւններ եւ դասաւորութիւններ են միայն նախընթաց մոտիւների։ Արտաքին լուսանցքում 12ր. մի ձիթենի ունի, որին փաթթուել է բերանը բաց և եղջիւրաւոր մի օձ։ Իսկ վերին տախտակի վերայ կանգնած է մի ոտքով, միւսը վեր բարձրացած, պարիկ՝ մարդկային գլխով և թռչունի մարմնով. պոչը ոճաւորած, գլխին սրածայր, բարձր գլխարկ, ներքեւի մասը դէպի դուրս ծալուած բոլորաձև։ Ճակատին դրսից՝ կեդրոնում՝ արմաւենիկից եւ եռատերեւից կազմուած մի զարդ, որից նռնենու ճիւղերը տարածւում են աջ և ձախ և երկու կաքաւներ կտցահարում են նրանց։

13ր-ի արտաքին լուսանցքում, ներքեւից՝ մի թռչունի կտցից կախուած է բուրվառաձև անօթ, որ երեւան է գալիս հայ հնագոյն և զուտ արեւելեան ծագում ունեցող աւետարանների մէջ. վերեւի տախտակի վերայ դրուած է եռոտանի աշտանակ, հաստ և վառուող մոմով։ Ճակատին նռնենու ճիւղերը փռուած են աջ և ձախ, որ կտցահարում են մի մի կաքաւ։

Աւելորդ ենք համարում տալ նաեւ 14ր — 15ա. խորանների մանրամասն նկարագրութիւնը, միայն ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում սիւների կազմութեան վերայ, որ ծագումով փայտից ենք համարում, հակառակ դէպքում անհասկանալի են նրանց զարդարանքները, մանաւանդ բների վերայ։ Այստեղ եւս հետաքրքրական են լուսանցքի զարդերը. 14ր-ի ներքեւի գերանի վերայ հաստատուած է ոճաւորած մի նռնենի, բունի ներքեւի մասը մեծ արմաւենիկից կազմուած, որի վերայ կանգնել է մի թռչուն, վիզը բունին փաթաթելով, գլուխը վեր բարձրացրել։ Իսկ վերեւի գերանի վերայ կանգնած է մի գեղեցիկ աքաղաղ, գեղեցիկ և ոճաւորած, պոչը ուղիղ վեր բարձրացրած (պատկեր 2), պարանոցին մանեակ։ Իսկ 15ր-ի արտաքին լուսանցքի վերեւի գերանի ծայրին նկարած է մի նռնենի, վերան թռչուն. նռնենու տակ փռուած է ծոպաւոր զորգ, վրան երկար և ծայրերը զարդարուն բարձ դրած, ուր նստած է մի պատանի և նուագում է սազի վերայ։ Նա հագել է կապոյտ կտորից, մինչև ծնկները հասնող բաճկոն, թևերը նեղ բազպանով, թեք բացուած կըրծ-